Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ա.Կարապետյան
(Պատվիրատուի ղեկավար անուն ազգանուն)

(ստորագրություն)

Արձանագրություն N 2

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ)

ք. Երևան 17 ապրիլի 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի
նախագահ՝ Ա.Գրիգորյան
քարտուղար՝ Մ.Գրիգորյան
անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Մ.Նազարյան, Մ.Մարտիրոսյան

1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակվել է <gnumner.am> կայքի գնանշման հարցում կատարելու ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև <www.armeps.am> էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են ք.Երևան Մ.Մկրտչյան 5 հասցեում, 2018 թվականի ապրիլի 17-ին՝ ժամը 10:00-ին <www.armeps.am> էլեկտրոնային կայքի միջոցով:

գ.<www.armeps.am> կայքի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	<Վերելակմոնտաժ> ՍՊԸ	ք. Երևան, Բելինսկի փ., 39/3 հեռ.091636868

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Մասնակիցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակիցի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակիցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0

5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

Մասնակիցի գնային առաջարկը հետևյալն է.

հ/հ չափաբաժին	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին	Մասնակիցների առաջարկած գները՝ ՀՀ դրամ	
			«Վերելակմոնտաժ» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ն ներառյալ
1	Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների	2 500 000	2083333	2500000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը միակ մասնակից **«Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ի** հետ, որը ներկա էր բացման նիստին, վարվեցին միաժամանակյա բանակցություններ գնային առաջարկի նվազեցման շուրջ, որի արդյունքում մասնակցի գինը մնաց անփոփոխ:

6. <u>Տվյալներ առաջին տեղեր</u>
<u>զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ</u>

6.1 Հիմք ընդունելով միակ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը՝ հանձնաժողովը **որոշեց՝**

ա/ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել **«Վերելակմոնտաժ» ՍՊԸ-ին:**

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

7. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ</u>

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 6-րդ կետի 6.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ _____ Մ.Գրիգորյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ.Սիմոնյան

_____ Մ.Նազարյան

_____ Մ.Մարտիրոսյան